


ԵՕԹՆԵՔԻՆ

ԲԱՐԻՈՔ ԿԵՆՏԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԲԱՆԻ ԵՇ ՆԼԻՍԻՐ
ԸՆՏԻՐ ԿԱՆՈՆՆԵՐ




ՏՊԱՆՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ
ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈՂԻՍՈՒՄ, ԳԻՆՆԱՆԺԸԼԱՐ
— 4864 —



Ե Օ Թ Ն Ե Ք Ի Ն

ԲԱՐԻՈՔ ԿԵՆՏՈՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ
 Կ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
 ՔԱՆԻ ՄԸ ՅԼԻԱՌԻ
 ԸՆՏԻՔ ԿԱՆՈՆՆԵՐ



ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՐԳԵԱՄԲ
 ԱՀՏԵՍԻ ԳՐԻԳՈՐ ՀԱՅԿԱՔԱՆԻ
 ԴԵՐՁԱԿԵԱՆ

A I
 9610



ՋՈԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲՆՆԻ Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ
 ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՆԱՆՃԸՐԸ
 — 1861 —



Ի Հայրապետութեան

Տ. Տ. ՄԱՏԹԻՈՍԻ

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Տ. ՅՕՀԱՆՆՈՒ

Հանգուցեալ Արքեպիսկոպոսի

Ի ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼՍՈՅ

Տ. ՍԱՐԳՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ



45358-64



Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՕՐ ԻՄՈՅ

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ԴԵՐՁԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ


ԵՒ ՀՈԳԵԻՈՐ ԾՆՈՂԻՆ ԻՄՈՅ

ՓԵՇՏԻՄԱԼՃԵԱՆ

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԺԱՊԵՏԻ

Ո՛վ որ այս փոքրիկ տեսարանն ընդունե,
Շատ բարձրական իմաստ կը քաղէ:




ԲԱՐԻՈՒՔ ԿԵՆՅԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ԵՒ

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՔԱՆԻ ՄԸ

ԳԼԽԱԻՈՐ ԸՆՏԻՐ ԿԱՆՈՆՆԵՐ



Ա.

ԱՄԵՆ ՄԷԿԵՐՆԻՍ ԱԼ,
ԵՕԹԸ ԿԵՐՊ ԱՌԱՋՆՈՐԻ ՈՒՆԻՄՔ
ԱՆՈՆՅ ԸՆԹԱՅՔԻՆ ՀԵՏԵԻԵԼՈՒ
ՊԱՐՏԱԻՈՐԱՊԷՍ

Նախ՝ հառաաքի կողմանէ առաջնորդ է
մեղի Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս . ին-
տոր որ ինքն ալ կը մկայէ . « Ոչ ոք գայ

առ. հայր, Երէ ոչ ինէ » :

Բ. Արօնից կողմանէ առաջնորդ մեզինախ-
կին սուրբ Հայրապետաց փոխարէն՝ ա-
մեն կարգաւորներն են . կաթուղի-
կոսէն՝ մինչեւ Տաներէց Խոռտովա-
նահայր Քահանան . իբրեւ հոգեւոր
բժիշկ եւ հոգեւոր հայր . ինչպէս որ
Պօղոս առաքեալը կըսէ . « Ունկնդիր
լերուք առաջնորդաց ձերոց եւ հայա-
տակ կացեք նոցա » :

Գ. Առաջնորդ կը սեպղի մեզի մեր Ազգին
հոգաւոր Հայկ Նահապետը ամեն ա-
տեն Հայերէն խօսելու , անոր վաղեմի
հրամանաւ .

Դ. Առաջնորդ է մեզի մեր հոգեխրատ
Վարժապետնիս , որ իբրեւ հոգեւոր
հայր խնամածու՝ զմեզ բարեանունող
առնել կը ջանայ , հաստատ հաւատ-
քով բարեկրօն ըլլալ . եւ բարեմաս-
նութեան ձիրքեր ունենալ զիսու-

թեամբք եւ իմաստութեամբք :

- Ե. Զ. Առաջնորդ են մեզի մեր մարմնաւոր ծնողքնիս , որոնք մեր մարմնաւոր պիտոյքը հողալէն 'ի զոտ իրենց քաղաքավարական եւ բարեպաշտական կրթութիւններուն հաղորդ ընել կը ջանան . որ բարեյիշատակ ըլլանք աշխարհիս մէջն ալ՝ Աստուծոյ առջին ալ :
- Ե. Մտապահան արհեստի մէջ վարժեցնող վարպետնիս առաջնորդ է մեզի արհեստահմուտ ընելու , որով աշխարհական կենաց սպրուտը ստանալու . Ահա առնք ամենքն ալ իբրեւ մէկ պայծառ յայտնի օրինակ եւ պատճառ բարեաց են մեզի՝ ամեն ժամանակ մեր վախճանական նպատակը երանաւէտ ընելու . անոր համար անշուշտ պարտաւորութիւն ունիմք զորձնական երախտագիտութեամբք եւ հնազանդութեամբք հպատակելու իրենց բարեբարկամացը :

Բ.

ԱՆՄԵՂ ՄՆԱԼՈՒ ՀՆԱՐՔԸ

Նախ՝ մտածելու է որ Բանն Աստուած
Քարմնանաչով մեր մեղացը համար մե-
ռու :

Բ. Ամենատես Աստուած ամեն տեղ ըլլա-
լով , իր ամենակարողութեամբը մեր
ամեն դործը կը տեսնա :


Պ. Անտոսանայի յիշելու եւք մեր վտա-
հանք , այսինքն անհրաժարելի մահը ,
ահեղ դատատանը , չարատանջ դը-
ժոխքը , եւ անճառելի արքայութիւնը :

Դ. Աստուծոյ եւ Աստուածայնոց հետեւիլ
պէտք է հնազանդութեամբ :

Ս. Տրամիլ պէտք է առաջին մեղքերնուս
վրայ , ոչ թէ անհողութեամբ բոլորս-
վին մարմնաւոր ուրախութիւններու
մէջ ընկղմիլ :

Զ. Միշտ զբազեալ գտանիլ պէտք է դոր-
ձալ :

Է. Հեռու փախչիլ մեզաց առիթներէն եւ
ախտաւոր մոլի մարդոցմէ :



Գ.

ԶԶԶՄԱՄԲ ԵՒ ԱՊԱՇԻԱՐՈՒԹԵԱՄԲ ԵՂԱՄ
ԿԱՏԱՐԵԱԼ ԻՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ
ԵՐԱՆԱԻԷՑ ԱՐԴԻՒՆՔԸ

Ա. Մաքրութիւն հոգւոյ եւ մարմնոյ :

Բ. Քաւուքիւն մեզաց :

Գ. Յաղթութիւն սատանայի :

Դ. Ազատութիւն յաւիտենական պատժոց :

Ե. Ուրախառիթ խաղաղութիւններքէն եւ
արտաքին զգայութեանց :

Զ. Արժանաւորութիւն ճաշակման կենա-
րար մարմնոյ եւ արեան Յիսուսի Քը-
րխտասի :

Է. Հաշտութիւն Աստուածային :



Դ .

ԱՇԻԱՐՀԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԳԸ
ԵՕԹԸ ՀԱՐԿԱԽՈՐ ԲԱՆԻ ՀԱՄԱՐ
ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՔԱՀԱՆԱՅԻ

- Ա. Մկրտութեան համար. որովհետեւ տնոնց ըսաւ Յիսուս, «Մկրտեցէք զնոսա՛ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ » :
- Բ. Խոստովանութեան համար. որովհետեւ Յիսուս իրեն առջեւը եկած բորոտը՝ Գարձեալ Քահանային ալ խաւրեց, «Նրբ ցոյց զանձն քո քահանային» ըսելով. «Նրե ումեք բողոքուք, բողեալ լիցի. եւ քե՛ որ արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս » :
- Գ. Սուրբ հաղորդութեան համար. վասն զի՛ ինչպէ՛ս որ հրեշտակը Նսայի մարգարէին բերանը ունելեօք տալով տաճարին կայծը, մաքրեց մարգարէն. տնանկ ալ մենք երկխղիւ եւ հաւատով


իրք ունեւիօք մերձենայու ասե՛ննիս՝
Քահանան տայ պիտի մեր բերանք
հրեշտակի նման. եւ զի՛ Սուրբ Աիօն
վերնատունը անձնց տուաւ իշխանու-
թիւն Սուրբ Պատարագը մատուցանե-
լու. «Ձայս արարէք առ իմոյ յիշա-
կի» ըսելով:

- Գ. Հիւանդաց բժշկութեան համար. կամ
Խաչահանդիստ ընել տալու, կամ Ա-
ւետարան կարդացնելու. Քրիստոսին
կանխատաց հրամանին յարմար. թէ
«Ձեռս զնիցէք ՚ի վերայ ճիւղաց,
զի բժշկեսցին»:
- Ե. Այր եւ կին իրար պսակելու համար .
- Զ. Խաղաղութեան համար, թէ որ խոռ-
վութիւն ինչ պատահի ընտանեաց մէջ:
- Է. Եկեղեցական օրինօք թաղման համար .
Ուրեմն քահանայք հրամայող են ժո-
ղովրդոց, ոչ թէ ժողովուրդք քա-
հանայից:

Ե .

ԵՕԹԸ ՏԵՍԱԿ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԿԱՅ
ՈՐ ՊԱՐՏԻՄՔ ՈՒՆԵՆԱԼ,
ՄԵՐ ԿԵՆՏԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ
ՈՐ ԻԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԳՏՆՈՒԻ
ՄՆՋԵՐՆԻՍ ԵՒ ԵՐԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ
ՀԱՍՆԻՄՔ

- Ա. Արքութիւն սրախ կամեցողական .
- Բ. Արքութիւն մտաց խորհրդական .
- Գ. Արքութիւն հաւատոյ Վրխատմէական .
- Գ. Արքութիւն վարուց դործնական .
- Ե. Արքութիւն բարուց քաղաքական .
- Զ. Արքութիւն ցանկութեան հոգեկան .
- Է. Արքութիւն զգայութեանց առաքինա-
կան .



Զ .

- ՀՈԳԻՈՎ ԱՂՔՈՏ ԸԼԼԱՆՈՒ
ԵՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՅԻՆՈՒԹԻՒՆ
- Ա. Գոհույնականութիւն ամեն սէկ բանի .

- Բ. Ժառթկալութիւն հանդերձի եւ կերակ-
րոյ :
- Գ. Ունեցածը հասարակութեան համար ալ
սեպել, ոչ թէ միայն իլնն համար :
- Դ. Ամենայն ինչ ստացուածք եւ փառա-
ւորութիւն աշխարհի՝ անցաւոր ըլլա-
լուն համար իրրեւ կղկղանք սեպել .
Մողմունին քսածը յիշելով թէ «Ունայ-
նութիւն ունայնութեանց ամենայն ինչ
է ընդունայն» :
- Ե. Հողին՝ Մարմնոյ կոխան չընելու հա-
մար՝ հողեւորը մարմնաւորէն վեր դա-
սել ամեն գործի մէջ :
- Զ. Անձը ամեն ատեն եւ ամեն գործի մէջ
խոնարհութեան մեջ սլահել առանց
պարծանաց :
- Է. Ինք զինքը տնարժան սեպել իշխա-
նութեան եւ փառաւորութեան :




Է.

ԵՕԹԸ ՏԵՍԱԿ ՀՈԳԵԻՈՐ ԲԱՐԻՔ ԿԱՆ
ԳԼԽԱՒՈՐԱՊԷՍ ՈՐՈՆՏՄՈՎ, ՄԱՐԳԻԿ
ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԲԱՂԴԱՒՈՐ
ԿԸ ՀԱՄԱՐՈՒԻՆ

- Ա. Քրիստոնէական լոյս հաւատքի մէջ
ծնանիլ մկրտութեան խորհրդոյ ժամա-
նելով:
- Բ. Յաջողածեան ըլլալ առաքինական դոր-
ծոց:
- Գ. Հողկխրատ ծեր մը կամ վարդապետ
մը ունենալ բարեանունդ մեծնալու բա-
րեպաշտութեամբ:
- Դ. Բարեջան իմաստուն վարժապետի մը
պաշտպանութեան ներքեւ ըլլալ ման-
կութեան ատեն:
- Ե. Առաքինասէր ճշմարիտ բարեկամ կամ
հաւատարիմ խորհրդակից մը ունենալ:
- Զ. Խոտասլանութեան խորհրդով Քրիս-

տոսի մարմնոյ եւ արեան հաղորդութեամբ իրրեւ երանական թօշակակեանքը փոխել:

Է. Քահանայի ձեռամբ օրինաւոր թաղման Մաշտոցական մաղթանօք հողային դերեղմանը մանալ որ այն քառութեան աղօթքներէն օժանդակութիւն ունենայ:



Ը .

ԱՆՅԱՒՈՐ ԿԵԱՆՔԻՍ ՄԷՋ
ՄԻԹԱՐԱՆՔ ԸԼԼԱԼՈՒ
ԵՕԹՂ ՏԵՍԱԿ ԳԼԽԱՒՈՐ ԲԱՐԻՔ ԿԱՆ
ԸՍՏ ՄԱՐՄՆՈՅ
ՈՐՈՆՄՈՎ, ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԲԱՂԴԱՒՈՐ
ԿԸ ՀԱՄԱՐՈՒԻՆ ՄԱՐԴԻԿ

Ա. Առողջութիւն անձին ունենալ:

Բ. Գիտութիւն սորվելու համար վարժարանի մը մէջ վարլիլ մանկութեան ատեն:

A
T
9610

338-64



- Գ. Ինքը զինքը շահելու համար արհեստահմուտ ըլլալ. անանկ որ քիչ աշխատանքով շատ վատարկի :
- Դ. Նեղ ատենին օգնական ըլլալու հոգաբարձու տէր մը կամ հաւատարիմ խորհրդակից մը ունենալ :
- Ե. Գրամական սրարտք չունենալ մէկին :
- Զ. Պատշապարելու քնակարան մը ունենալ :
- Է. Բարեկիրթ գուռակ կամ սան մը կամ աշակերտ մը ունենալ. իրրու ժառանգ բարի . որ կենսափոխութենէ ետքը հոգւոյն համար բարեմաղթութիւն ալ կըլլայ անոնցմէ :



Բ.

ԽՈՂԵՄ ՄԱՐԳԷ

- ԱՅՍ ԵՕԹԸ ՏԵՍԱԿ ԳՈՐԾՈՒ, ԿՐՑԱՅՏՆՈՒԻ
- Ա. Ամենեւին այլոց գայթակղութիւն չի տար ոչ գործով եւ ոչ բանիւ :
- Բ. Իրեն վերաբերեալ չեղած գործին չի

խառնութիւն :


Գ. Ամեն բանին վախճանը կը դիտէ :

Դ. Գիտութեան յարդը չի գիտցողին առջին գիտութեան խօսք չընելու . կամ հաւատոյ մասն եղած բաներու վրայ վէճ չի բանար :

Ե. Անանկ դործի կսկըսէ , որն որ կատարելու կարողութիւն ունենայ :

Զ. Առանց քննութեան ոչ վճռադատութիւն կընէ , եւ ոչ պատասխան կուտայ :

Է. Քիչ խօսող է , ու շատ լսող :



Ժ.

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԳՀԱՆՐԱՊԷՍ
ԵՕԹԸ ԳԼԽԱՒՈՐ ԿԱՆՈՆ ՈՒՆԻ

Ա. Տեղը՝ մարդը՝ ժամանակը ճանչնալ :

Բ. Աժօթխածութիւն :

Գ. Անկիրթ մարդոց հետ ընկերութիւն չընել :

- Գ. Վատահամբաւութենէ՛ իբրև թշնամիէ
մը վախնալ ,
- Ե. Քաղաքավար մարդոց շարժմունքէն
եւ խօսքէն օրինակ առնուլ ,
- Զ. Կրթութեան օգուտը եւ անկրթութեան
վնասը նախադուշակելով բարեհամբա-
ւութեան վախաքիլ ,
- Է. Ամեն դորժառնութեան մէջ միջասահ-
ման շախաորութիւն տնննալ ըստ վա-
յելչութեան , ինչ որ բարեկիրթ ան-
ձանց հաճոյ կը թուի :




ԺԱ.

ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԿԹՈՒԹԻՒՆԸ
ԵՕԹԸ ՏԵՍԱԿ ՕՔՈՒՏ ԿԸ ՆԵՐԳՈՐԾԷ
ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

- Ա. Նախադուռն է ամեն առաքինութեանց ,
- Բ. Համ տուող աղ է ամեն առաքինու-
թեան ,

- Գ. Բաղձանքը կարթնցունէ առաքինի ըլլալու :
- Դ. Զգուշութիւն կը բերէ առաքինութիւնը կեղծաւորաբար չընելու :
- Ե. Բարեկարգիչ կըլլայ առաքինական գործքերու :
- Զ. Վայելուչը ընտրել կուտայ ժամանակը բազմատելով :
- Է. Ուրիշներն ալ առաքինասէր ըլլալու պատճառ կըլլայ ով որ ունի քաղաքավարական կրթութիւն :



ԺԲ.

ԱՆԿԲԹՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՆՇԱՆՆԵՐԸ

- Ա. Գաղտուկ գիր գրողին կամ ընթերցողին կամ խօսողին մօտենալ , ու հարցումստործով հետաքրքիր ըլլալ :
- Բ. Դրամ համրողին կամ հաշիւ տեսնողին քով երթալ :
- Գ. Բաղմականաց մէջ իրեն կարգը չեկած


ատենն խօսիլ , կամ աղէկ բան մը բրած
ուենի նէ ինքիրմէն ծանուցանելով պար-
ծիլ :

Դ. Քան զինքն մեծ եղողէն առաջ սեղան
բազմիլ ինդութեամբ , կամ համբան
յառաջ քալել :

Ե. Եկեղեցւոյ մէջ խօսակցիլ :

Զ. Մաքուր տեղլանք փողոցական օտից
ամանով մանայ :

Է. Պէտք չեղած ատեն ուրիշին առջեւ իր
քսակին դրամը համբել :



ԺԳ.

ԱՆՀԱԻԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ԳԼԽԱԻՈՐ

ՆՇԱՆՆԵՐԸ

Ա. Բարեկամին ծածուկ խորհուրդը յայտ-
նել :

Բ. Պահճու եղած բանին՝ թէ դրամի՝ թէ
հանդերձի՝ եւ թէ այլ ո եւ իցէ ապա
բանքի նենդութիւն ընել , կամ իրեն

- չեղած նամակագիրքը բանալ կարդալ՝
- Դ. Խոստացած պարտքը պայմանագրու-
թեան ժամանակին չի հատուցանել՝
- Դ. Ժամագիր եղած տեղը ժամանակին չի
գտնուիլ՝
- Ե. Սակարկութեամբ աղէկը խոստանալ,
եւքը գէշը տալ՝
- Զ. Նենգութեամբ բարեկամին վրայ պա-
կասութիւն փնտռել, հրապարակի մէջ
խայտառակելու համար՝
- Է. Բարեկամին ունեցած պակասութիւնը
զազոնարար իրեն չխնայունել՝



ԺԴ.

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՕԹԸ ՏԵՍԱԿ ԱՐԳԵԼՔ ԿԱՅ
ՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՔ

ՄԱՀՈՒ ՉԱՓ ՎՆԱՍԱՌԻԹ ԿԸ ՍԵՊԵՆ

- Ա. Առաջինն է ժամալաճառութիւնն՝
- Բ. Ժամալաճառութեան պատճառ եղող
չաղակրատ ընկերքն՝

- Գ. Գոնէ քիչ մը թղթով կտարարագրիչ մը
քովը պատրաստ չունենալը :
- Գ. Ունայնաքիլան գրադմունքը :
- Ե. Ասանց խոհականութեան եղած գրո-
սանքը :
- Զ. Ռամկայ ինճոյից երգոց եւ պարուց
աղաղակը :
- Է. Օրինակը չաւնուած գրուածքին կո-
րուատը :

ԺԵ.

- ԾՈՅԼԸ ԵՕԹԸ ՆՇԱՆ ԿՈՒՆԵՆԱՅ ԻՐ ՎՐԱՆ
- Ա. Քնէածութիւն :
 - Բ. Երժակալ :
 - Գ. Ազշութիւն :
 - Դ. Գանդաղութիւն :
 - Ե. Ժամաւճանառութիւն :
 - Զ. Այլոց սեղանին յուսադիր ըլլալ :
 - Է. Հնարագէտ կըլլայ արդեւք մը դանա-
լու՝ չի բանելու համար :

ԺԶ.

ՄԱՐԴՈՒՍ ԿԵԱՆՔԸ ՆՈՒԱՃՈՂ,
ԵՅԹԸ ԳԼԻԱՒՈՐ ԶԱՐ ԱԽՏ ԿԱՆ

- Ա. Ծուլութիւն,
- Բ. Բարկութիւն,
- Գ. Գինեմոլութիւն,
- Դ. Շատակերու թիւն,
- Ե. Այլոց բարեաց վրայ նախանձիլ,
- Զ. Անհնարին բաներու ուժգին քաղձալով
մտատանջութիւն,
- Է. Մշտատալնոյ զրազանք.

ԺԷ.

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆԸ
ԲԱՆԵՑՆԵԼՈՒ ԵՅԹԸ ՏԵՍԱԿ ԿԱՆՈՆ ԿԱՅ

- Ա. Բարձումն ասելութեան,
- Բ. Անյիշաչարութիւն,
- Դ. Քրիստոսին այս խրատը ստէոյ յիշել՝
«Զոր ինչ կամիր քե արասցեն ձեզ
մարդիկ, այնպէս արասձիր եւ դուք

նոցաւ: Ըստ որում առանձին հիշ մէկը
չի կրնար ըլլար ժառանգորդ բարեաց
մինչեւ ընկերին ալ նոյնը չի կամենայ:

Դ. Ամենքս ալ իրարու հոգեհատար ըլլալ-
նիս գիտնալով, իրարու յարգութիւն
ճանչնալ անկեղծ սիրով. քանզի ա-
մենքս ալ եւք 'ի սրտակեր Աստուծոյ
ստեղծած եւ սուրբ Արարչութեան ան-
ուամբ մի եւ նոյն սուրբ Աւագանի
յարգանդէ ծնած:

Ե. Հայկազնեան ազնիւ լեզուներս անխա-
փան գործածել, ազգիս յարզը պաշտ-
պանելու եւ միարանութիւնը մշտակապ
պահելու:

Զ. Ինչպէս բոլորը մասանց ամբողջու-
թեամբը կատարեալ կրլայ, Ազգիս
ամբողջութիւնն ալ իւրաքանչիւր ան-
հատով վասնորոյ ամեն մէկ մարդ ը-
սելու է, թէ ինտոր օր ես կարօտ եմ
Ազգիս հօգնակալութեանը, Ազգն ալ

կարօտ է իմ օգնականութեանս . ես
թէ որ ուրիշին բերը վերցունելու հաս-
նիմ , ուրիշն ալ իմ բերս վերցունելու
կը հասնի . ես որ չափով սերմա-
նոց ըլլամ Ազգիս , նովին չափով
քաղելոց եմ Ազգէս . զի ոչ միայն
ես ինձի համար ծնած եմ , հապա Ազ-
գիս համար ալ : Աւր այն ըստ նմա-
նութեան մոմեղինի ծախել զինքն լու-
սատու լինել սցլոց :

- Է. Ընկերներս ալ միւս ես մը սեպելու
եմք անխափր . ըստ որում մի եւ նոյն
Քրիստոսի գլխոյն մերոյ անդամք եմք
ամենեքին . ուստի մէկին ուրախու-
թիւնը կամ արտմութիւնը առ հասա-
րակ ամենուն է . եթէ վշտանայ մի ան-
դամն՝ վշտանան ամենայն անդամք :
Ահա այսքան հարկաւոր է Ազգիս
վստարեր առիթներուն զգուշու-
թիւն ընել . խնայտուն վարդապետի

մը ըսածին պէս. քէ և Ազգ իմ, ազք
իմ » :



ԺԸ.

ԵՅԹՐ ՏԵՍԱԿ ԱՌՆՉՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԻ
ԿՐ ԳՏՆՈՒԻՆ ՄԱՐԳԻԻԿ
ԵՅԹՐ ՏԵՍԱԿ ՎԱՅԵԼՈՒՉ ՍԻՐԵԼՈՒԹԻԻՆ
ԿՐ ԲԱՆԵՑՈՒՆԵՆ ԻՐԱՐՈՒ ՀԵՏ
ՈՐՈՎ ԿՐ ԿԱԶՄՈՒԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻԻՆԸ

- Ա. Ոմանք սիրեն հայրարար . որով կըս-
ուին որդեսէր . ինչպէս Վարդապետն
արՎարժապետն ալ արհեստաւոր Վար-
պետն ալ այսպէս կը սիրեն աշակերտ-
նին :
- Բ. Ոմանք սիրեն որդիարար կամ աշա-
կերտօրէն . որով կըսվին հայրասէր եւ
ծնողասէր :
- Գ. Ոմանք սիրեն տիրաւար . որով կըս-
վին հոգաբարձու եւ ինսամածու . ինչ-

պէս Քահանան ալ այսպէս կը սիրէ
ժողովուրդը :

Գ. Ոմանք սիրեն ծառայարար . որով կըս-
վին տիրասէր եւ երախտագէտ . ժողո-
վուրդն ալ այսպէս կը սիրէ Քահանան :

Ե. Ոմանք սիրեն բարեկամարար . որով
կըսվին բարեկամ եւ հիւրասէր :

Զ. Ոմանք սիրեն եղբայրարար . որով կըս-
վին եղբայրասէր եւ մարդասէր :

Է. Ոմանք սիրեն ընկերարար . որով կըս-
վին ընկերասէր եւ ընտանեակէր . ինչ-
պէս այր եւ կին : Ուրեմն ամեն մէկ
մարդ իրենց աստիճանին վայլած սրտ-
շածը կատարելու ըլլան , անտրդու-
թեան տեղի չի մնալով , ասելու թեան
բարբանջմունք ալ չըլլար . ու Ազգս
Խաղաղութեան մէջ կ'ըլլայ հանապա-
ղօր :



ԺԹ.

ԱԶԳԱՍԷՐ ԶԵՂՈՂԻՆ ՆՇԱՆԸ
ԻՒՐ ԳՈՐԾԵՐԷՆ ԿԸ ՅԱՅՏՆՈՒԻ

- Ա. Երբ իր Ազգէն կամ ազգականէն մէկը
կը բամբասէ ատելութեամբ. կամ ամ-
բաստանութիւն ընող դատախազին չար
խրատ կուտայ չարի չար հատուցա-
նել :
- Բ. Գութ չունենար Ազգին վրայ :
- Գ. Իր ձեռքէն եկած օգնականութիւնը
որ իրեն կը սրտաշաճի՝ չընել, ինչ
փոյթ է ինծի ըսելով ետ ետ կը փախչի :
- Դ. Աղօթք ըրած ատեն միայն իրեն համար
կը խնդրէ յԱստուծոյ սղարմութիւն եւ
բարութիւն, բարեմաղթութիւն չընելը
Ազգին համար ալ :
- Ե. Ուրիշին խանութին առջևէն եկաւ որը
(միւշթէրին) իրեն կը կանչէ. կամ ա-
նոր վաճառելու առջամքը վար կը
դարնէ :

- Ձ. Իր ազգէն տկար կամ աղէտ մէկը թէ հողեկան թէ մարմնական վնասառիթ գործով տեսնայ 'նէ' հողը չըլլար ինաց տալու խրատով .
- Է. Իր շահէն կամ սպրանքէն կամ կերածէն բաժին չի հաներ կարօտելոց . ինչու որ ասանկ մարդիկ միշտ իրենց շահուն միայն կը հետեւին .

Ի.

[[ԱԶԳԻՍ ՊԵՐՃԱՓԱՅԼ ՓԱՌԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ
ՀԵՏԵՒԵԱԼ ՅԱՏԿՈՒԹԵԱՄԲԲ ԿԸԼԼԱՅ

- Ա. Միաբանական սիրով . մեծը պղտիկին առանց խրոխտալու՝ ինամածութեան սէր ցըցունելով , պղտիկն ալ մեծին առանց ապստամբութեան՝ հնազանդութեան սէր ցըցունելով . իբրև ամենքն ալ իրարու հողահատոր .
- Բ. Վարժարաններուն անկարօտ կերպիւ բարեկարգութեամբը .

- Գ. Եկեղեցեաց եւ վանօրէից բաւական
եկամօք :
- Դ. Կարգաւորաց ընտիր վարուք . ժողո-
վըրդոց բարի օրինակ ըլլալու շա՛ի բա-
րօյական խրատարանութիւննին իրենք
ալ կատարելով . Աւետարանական այս
խօսքին յարմար , թէ « Որ առնե եւ
ուսուցանե , նա մեծ կոչեցի յարբա-
յութեան երկնից » , որ կրօնական սաշ-
տօնները արժանաւորութեամբ կա-
տարուի :
- Ե. Օրինապանութեամբ եւ բարեպաշտու-
թեամբ Աստուածախրարար , մինչև
անգամ յարիչ ազգաց բարի օրինակ
ըլլալ , Քրիստոսի ըսածին պէս թէ՛
« Տեսցեն զգործս ճեր բարիս , եւ փա-
ռաւորեցեն զձայր , որ յերկինս է » :
- Զ. Իրաւախօս՝ Իշխանաց եւ վարդապե-
տաց արդարադատ արդեամբք :
- Է. Ազգային օրինաւոր ՍԱԼՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԸ :

ԻԱ.

ԿՈՌԻՆՏԱՐԱՐ ՄԱՐԴԻԿ ԵՅԹՐՉ ՏԵՍԱԿ
ԱԽՏ ՈՒՆԻՆ ԲՆԱԿԱՆԱԲԱՐ ՈՐ ԻՅՐԵՒ
ՍԿԶՐՈՒՆՔ ԵՆ ԿՈՌԻՆՏԱՐՈՒԹԵԱՆ

Ա. Կըլլան կամակոր :

Բ. Անհամբեր :

Գ. Բարկացող :

Դ. Նախանձ :

Ե. Հպարտ :

Զ. Անպարկեշտ :

Է. Լեղտադար :



ԻԲ.

ԵՒ ԼԵԶՈՒՆԻՆ ԵՅԹՐՉ ՏԵՍԱԿ ԶԱՐՈՒԹԵԱՆ
ԳՈՐԾԻՔ ԵՆ ՈՐ ԱՆՈՆՑՄՈՎ ԿՈՒՆԵՆԱՆ
[ԼԵԶՈՒԱԳԱՐՈՒԹԻՒՆՐ

Ա. Կըլլան շատարան :

Բ. Մեծարան :

Գ. Ստարան :

Դ. Սաստկարան :

- Ե. Նենգաւոր ,
- Զ. Վիրաւորիչ ,
- Է. Երկասյրի :



ԻԳ.

ՊՈՒՍՏԱՐԱՐՆԵՐՈՒՆ ՆՇԱՆՆ ԱԼ ԱՅՍ ԵՕԹԸ
ԱՄԲԱՐԻՇՏ ՅՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ

- Ա. Ա չաք ծափակ խորտարղը յայտնելով
մասնութիւն կը սիրեն :
- Բ. Բարեւ տալ տանու սոխութիւն չեն
ունենար հեղահաղի մարդոց պէս մար-
դասիրարար :
- Գ. Յօժարութիւն աւելի ունին բամբասա-
նաց :
- Դ. Զարկը յարգական անուամբ յիշել
ծանր կուգայ իրենց :
- Ե. Ինչ արտեսաաւոր սիրուն բան մը պա-
տահի՝ կամ պատմութի խօսքերնին
ձեւակերպելով իրենց խրացուցանել
կը ջանան՝ եւ ըրի , եւ ըսի , իմա է :

ընելով . բայց գործին տէրը թէ յայտնի
ըլլայ , որ սուտ չի վերցուներ , ան ա-
տեն չի լսելա . չի տեսնալու . համար կը
վախոյճալին . կամ ուրիշ խօսք կը թե-
րեն վրայ աք խախտուի .

Ձ . Լատմնուն վրայ ծուռ դատում ընելով
հակառակախօսութիւն եւ վիճարա-
նութիւն կը հանեն կտիւ նիւթելա . հա-
մար :

Է . Ուրիշի համար աղօթք ընել կամ օրհ-
նենք առ չեն սիրեր . թէ եւ աղէ-
կութենն երախտիք ալ տեսնան մէ-
կէն՝ շնորհակալութեամբ բարեմաղ-
թութիւն ընել սովորութիւն չունին .



ԻԴ.

ԿՈՒՅՈՒՄՆԱՐ ՄԱՐԳԻԿ ԵՕԹԸ ԳԼԽԱԻՈՐ
ՎՆԱՍՆԵՐ ՈՒՆԻՆ ԽՆՈՆՅ ԵՆԹԱԿԱՅ
ԸԼԼԱԼՈՒ ԱՆԽԱՂԱՂ ԿԵՆՕԹ
ԻԲԲԵԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՊԱՏԻԺ

- Ա. Անճաճոյ ըլլալով Աստուծոյ՝ շնն աւնե-
նար արժանաւորութիւն առաքինու-
թեամբ զօրանալու :
- Բ. Չնն ունենար զօրութիւն խելահաս ըլ-
լալու ճշմարիտ եղբայրսորութեան եր-
ջանկառիթ կանոններուն , որն որ ըն-
դաւնելի են Աստուծոյ եւ մարդկան :
- Գ. Չնն ունենար յաջողութիւն իրենց գոր-
ծերնուն մէջ իրենց նպատակին հաս-
նելու . հազա ձախարչութեան մէջ
կը տադնապին :
- Դ. Չնն ունենար գոհունակութեամբ վա-
յելչութիւն իրենց ունեցածնուն վրայ :
- Ե. Կունենան մշտտապէս թաղձանք իշխա-
նութեամբ զայլս խորասկելու :


- Չ. Կունենան հողետանջ նախանձութիւն
այոց բարեացը վրայ հալիլ ու մռչիլ
Է. Կունենան անհանդիստ սիրտ եւ արբ-
տունջ , բաղձախտանդ փորձանօք պա-
շարուած ըլլալով :

ԻԵ.

ԿՈՌՈՒԱՐԱՐՆԵՐՈՒՆ ՄԱՐԿԿԱՅԻՆ
ՊԱՏԻԺՆԵՐՆ ԱՂ, ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՃ
ԱՅՍ ԵՕԹԸ ՏԵՍԱԿՆ Է

- Ա. Մարդ չուղեր կուուարարին հեա կե-
նակցիլ :
- Բ. Անարդ անուն կունենան :
- Գ. Քարի օրինակ առնելու ազնիւ բան մը
չեն կրնար լսել մէկէն :
- Դ. Իրենք անաէր ըլլալով՝ սիրոյ պատու մը
չեն կրնար քողել մէկէն :
- Ե. Չախօրդ վիճակի մէջ որ նեղին՝ ազա-
տութեան խրատ տալու կամ հարք մը
գտնալու օգնական չեն ունենար երբէք :


- Ձ. Փոխ դրամ կամ ուրիշ քան մը սր
պէտք ըլլայ՝ տուող չըլլար կասկած
ունենալով ետքի խառվածքնէ՛ :
- Է. Խօսքերնուն քնառ չեն հաւատար :



ԻԶ.

ԻԱՂԱՂԱՍԷ՞Ր ՄԱՐԳՈՅ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ Ը
ՀԵՏԵԻԵՋԼՆԵՐՆ ԵՆ
ՈՐ ԿՈՒՆԵՆԱՆ ԲՆԱԿԱՆԱԲԱՐ

- Ա. Կրկան հեղահողի :
- Բ. Համբերող :
- Գ. Խոնարհ :
- Դ. Բարեսիրտ :
- Ն. Բարեխոհ :
- Զ. Բաղցրաբան :
- Է. Սակաւարան :




Ի Է .

ՈՐ ԱՍՈՆՅՄՈՎ, ԱՌԱՅԻՆԱԿԱՆ
ԽՕԹԸ ՏԵՍԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԿՈՒՆԵՆԱՆ
ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԳՐԻՍՏՈՆԷՆՈՒԹԵԱՆ ՎԱՅԵԼՈՒՉ
ԻՐԲԻ ՅԱՅՏՆԻ ԱՊԱՅՈՒՅԱԿԱՆ ՆՇԱՆ
Ի ԱՂԱՂԱՍԻՐՈՒԹԵԱՆ

- Ա. Կունենան յորդական անուամբ աղջու-
նասուութիւն :
- Բ. Աիրայ խօսակցութեամբ ընկերակցու-
թիւն :
- Գ. Չովարանութիւն, այլոց բարի դարձա-
նութեանցը վրայ :
- Դ. Հաշտութիւն սիրել :
- Ե. Հոարադիտութիւն խոսվոյոյդ ալէկո-
ծութեան շարախորհուրդ վրդովմունք-
ները մարել խափանել :
- Զ. Բարեմաղթութիւն առ հասարակ ամե-
նեցուն համար , բարեբարաց եւ մի-
անգամայն թշնամեաց համար :

- Է. Համախոհութեամբ հաւատարիմ գրա-
նուիչ ճշմարտապատում արդարու-
թեան :



ԻԸ .

ԽԱՂԱՂԱՍԷՐՆԵՐԸ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ
ԱՅՍ ԵՕԹԸ ԳՂԽԱԻՈՐ ԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԿԸ ՇԱՀԱԻՈՐԻՆ

- Ա. Ինչ բարի խնդրուածք ունենան, Աստ-
ուած աղօթքնին լսելով վաղվաղ կը
կատարէ :
- Բ. Իաղաղասիրաց երանութիւնը կունե-
նան, որ կըսէ Յիսուս . « Երանի խա-
ղաղարարաց, զի նորա որդիք Աստու-
ծոյ կոչեցին » :
- Գ. Հեզութեան երանութիւն ալ կունենան,
թէ « Երանի հեզոց, զի նորա ժա-
ռանգեցեն գերկիր » :
- Դ. Արժանաւորութիւն կունենան եւ Քր-
իստոսի խոստացած այս բարութեան,

որ հաւատարիմ եղբայրասիրաց համար
ըսաւ առակս . « Զի ՚ի փորուն հա-
ւատարիմ եղեր, ՚ի վերայ բազմաց
կացուցից գրեզ »:

Ե. Քրիստոսի ճշմարիտ աշակերտաց կար-
գը կը համարվին, որ ըսաւ համախոհ
և խաղաղասէր եղբայրասիրաց հա-
մար . « Այսու զիտասցեն մարդիկ քե
աշակերտք իմ իցեր, երկ յգմիմեանս
սիրիցեր »:

Զ. Աստուծոյ հախախնամական պաշտպա-
նութիւնը կուսնենան իրրեւ ամուր պատ-
նէշ, խռովայոյզ մարդոց թշնամական
նետերէն աղատ մնալու, ինչպէս վկա-
յեր է Գաւթիթ . « Տեսցեն ասելիք իմ
եւ ամաչեսցեն »:

Է. Սիրելի կըլան Աստուծոյ եւ մարդկան .



ԻԹ.

ԼՌՈՒԹԵԱՄԲ ՊԱՏԱՍԻԱՆԵԼԸ

ԵՕԹԸ ԲԱՆ ԿԻՄԱՅՈՒՆԷ ՀԱԿԱՌԱԿՈՐԳԻՆ
ՈՐՆ ՈՐ ՍԻՐՏ ՎՆՏԱՅՈՒՅԵՐ Է
ԲԱՆԻԻ ԿԱՄ ԳՈՐԾՈՎ,

- Ա. « Ոչիևջ է պիտոյ տալ քեզ պատաս-
խանի » ըսել մը կիտայուի, ըրածդ
կամ ըսածդ ոչինչ ըլլալուն համար :
- Բ. Վեհանձնութիւն յըրոյցած կըլլանք
մեր վրայ. իբր թէ իմ վարկումիս չի
վայլեր քեզի հետ վիճել ըսել մը .
« Իմաստունը ո՞վ է՝ այն լուռ կենայ »
կըսէ Սողոմոն :
- Գ. Տկար խելքէն յիմարութիւն՝ եւ ան
կիրթ մարդէն անբարտաւանութիւն՝ ո՞վ
չի գիտեր որ կը ծնի . ուրիմն առանկ
առեն քեզի հետ խօսիլ չըլլար :
- Դ. Ըրածդ կամ ըսածդ անիրաւութիւն
ըլլալով, անոր փոխարէն Աստուած
կրնայ հատուցանէր. ինծի չի վայլեր

որ քեզ դատեմ, եզրայրսիրութեան
կանոնին դէմ յանցանքդ երեսիդ առ-
լով :

- Ե. Համբերութեան ցանկալի ստաքինու-
թիւնը ասանկ անիրաւ. դորձք՝ բուռ-
տեն սէտք է վաստակից պատասխան
չի տալով . « Համբերութեամբ ստաց-
ջիք զագիտ ճեր » հըսէ Սուրբ Գիրքը :
- Զ. Յանցանք չունենալնու ապացոյց մը
ցըցուցած կըլլանք . իբրութէ՛ այդ
քու ըսածիդ կամ կարծիքիդ յարմար
բան մը չեմ ըրած , որ վշտանալով
բարբառիմ . գրամին դէշն ալ խօսքին
դէշն ալ տիրոջն է , քանի վնաս չունի .
զնառու զածիդ շտի խօսէ ըսել է լուս
կենայր :
- Է. Ուրիշները թէ լսելով կամ տեսնելով
հասկըցան որ այդ իբրաւունք չէ , ա-
նհնցմէ ստնայէ . ապա թէ ոչ՝ դու քու
ըրածդ ետքը մտածելով բաւական է

որ քու բանականութեամբդ ինքիրմէդ
ամաչես իմ լուսեանս հետ բազդա-
տելով :




L.

ՄԾԱՅՆ ԱՓՍՈՍ ԲԱՌՆ ԱՂ, ԲԱՒԱԿԱՆ Է
ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ԳԷՄ

ՈՐ ԵԹԸ ԿԵՐՊ ԻՄԱՅՈՒՄ ՈՒՆԻ

- Ա. Ափսոս որ դէմինս հաւատարիմ կարծե-
լով անկեղծօրէն վարկեցայ հետը :
- Բ. Ափսոս որ դէմինս եղբայրատէր կար-
ծելով սխալեր եմ :
- Գ. Ափսոս որ ոչինչ բանէն խօսք աւել-
ցունելով խառնութիւն կը յայտնես :
- Դ. Ափսոս որ բարեսրտութիւնը վերցուած
ըլլալով եղբայրսիրութիւն ալ չէ մնա-
ցեր :
- Ե. Ափսոս որ արդարութիւնը ճանչնալով
չարն ու բարին որոշելու կարողու-
թիւն չէ մնացեր :

- Զ. Ախճոս որ ընտիր բարիք մը կորսընացուցածի պէս դժբաղդութեամբ ազնիւ բարեկամն կորուսեր եմ, ու հիմայ ինձի թշնամութիւն ընել կը ջանայ որքո խորտակելով:
- Է. Ախճոս որ նուազեաց սուրբ, կամ թէ նուազեցին ճշմարտութիւնք յորդոց 'ի մարդկանէ:



Լ Ա.

ՇՄԹԸ ՏԵՍԱԿ ԱՌԱՐԿԱՅ ՌԻՆԻՄՓ

ՎԵՏԱՅՆՈՂԻՆ ԱՆԻՐԱՅՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԵԼՈՒ
ՔԱՆ ԹԷ ԲԱՐԿԱՆԱԼՈՎ ՎՐԷԺՆԵՐԻՐ
ԸԼԼԱԼՈՒ

- Ա. Եթէ տղայ է, իրեն խելքին տկարութիւնը յիշելու է վաքր հատակին նախելով:
- Բ. Եթէ հաւասարակից կղբայր է վիճողը, կղբայրսիրութեան սրտաաւորութիւնը

յիշելու է թէ բնական թէ Աւետարանական :

Գ. Այնքան քան զինքն մեծ է . 'ի հարկէ կրօնակիրք կամ հպատակութեան մեծին մէջը պակաս գրուցէ պիտի . եւ անյիշատարութեամբ ներող պիտի գտնուի հնազանդութեան միջոցաւ :

Դ. Այնքան զխտուն է , 'ի հարկէ իրմէն աւելի գիտէ ամեն մէկ գործին սպարազան եւ վախճանը :

Ե. Այնքան ազէտ է պակասաւոր դանուողը . իրեն տղխութեանը նայելով ներելու է . որովհետեւ տղխութիւնը շատ անխաճեմութիւն [եւ տկարութիւն կը բերէ . ինչպէս կըսեն :

« Ես ալ քեզ նման ըլլամ մեծատուն , ինչո՞ւ աւելով ծառայեմ քու տուն ք :

Զ. Վասն մեզոց ալ եղած կըլլայ , անկայ յիշելու է . որովհետեւ երբ Աստուծոյ հետ ապստամբի մէկ մարդ , ու-

րիշներն ալ իրեն կասպատեմբին :

- է. Ամենակին պատճառ մըն ալ շունեցած
անոյր երբ անխրաւութիւն մը տնայ
մէկէն՝ ըխուտի խմարհութիւնը եւ
տնչի շարութիւնը միտք բերելով, տ-
նոր իտաշակից ըլլալու համար՝ խոնար-
հութեամբ՝ համբերութեամբ՝ եւ սի-
րով ներքեւ է :

L.F.

ՅՍՏՈՒԱՄ ԵՅՍ ԵՕԹԸ ԲԱՆՈՎ,

ԿԸ ԿԱՌԱՎԱՐԷ ԶՄԵՁ ԶԱՄԵՆԵՍԻՆ

- Ա. Իւր անհուն խմաստութեամբ,
Բ. Իւր անհուն ոգորմութեամբ,
Գ. Իւր անճառելի նախախնամութեամբ,
Դ. Իւր անքննելի արդարութեամբ,
Ե. Հին եւ Նոր Կտակարանաւ, կարգա-
ւորներուն ձեռամբ,
Զ. Բարի հրեշտակներով,
Է. Իւրաքանչիւրոց սուամ սրտի խղճիւ :

L Գ.

ԵՅԹԸ ՏԵՍԱԿ ԿԱՌԱՎԱՐՄԻԹԻՒՆ ԿԱՅ
ԱՇԻԱՐՀԻՍ ՄԷՋ ՄԱՐԳՈՅ ՁԵՌԱՄԲ

Ա. Քաղաքական :

Բ. Չինուարական :

Գ. Աշդարին :

Դ. Եկեղեցական :

Ե. Պաշտօնական, որ դորձարանի մէջ միմե-
կանց տեսչութիւն կը կրեն

Ձ. Տնական :

Ե. Անձնական, որ իւրաքանչիւր անհատ
իրեն հոգեւոր եւ մարմնաւոր կառա-
վարութիւնը պարտաւոր է հոգալու
պատշաճարար :



Լ Դ .

ԻՒՐԱՔԱՆՁԻՐ ՏԱՆՈՒՏԵՐԱՆՑ

ՏՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ՊԱՐՏԱԻՐՈՒԹԻՒՆՆԸ ՀՈԳԵՒՈՐ ՄԱՍԻՆ


ԵՕԹՇ ԿԵՐՊ Է

- Ա. Բարի օրինակ ըլլալ ընտանեացը իրեն վարքովը եւ բարքովը ,
- Բ. Զգուշութիւն ունենալ , անոնց առջին մտլութիւն չընելու . հայհոյութիւն՝ բամբասանք՝ զողութիւն , եւայլն ,
- Գ. Խրատատու ըլլալ Աստուածային երկիւղը՝ եւ ըստ իւրաքանչիւր գործոց հատուցում ՚ի Տեառնէ ըլլալը ծանուցանելով ,
- Դ. Զաւակացը՝ Տէրունական աղօթք՝ Հայրմերը սորվեցունել . եւ դպրատուն խրկել կարգալ գիր եւ Քրիստոնէական կրօնք սորվելու համար . եւ երբեմն սորվածը քննել խրախուսելով ,
- Ե. Հանատազ քննիչ ըլլալ անոնց վար-

քին , թէ աղօթք կընեն . Եկեղեցի-
կերթան . եւ հինգ Տաղաւարին խտտո-
վանելով սուրբ Հաղորդութիւն կառնեն
մի :

Ձ. Ձգուչացնել չար ընկերներէն :

Է. Ձաւակացը առջին չի քամահրել իրենց
վարպետը կամ վարժապետը , որ ապըս-
տամբութիւն չունենան գործէն ձանձ-
րանալով . հապա սիրով եւ հնազան-
դութեամբ հրամանակատար ըլլան ա-
մեն կերպիւ , բարեսնունդ ըլլալու հա-
մար :



Լ Ե .

ԻԻՐԱՔԱՆՁԻԻ ՏԱՆՈՒՏԵՐԱՆՅ

ՏՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՄՆԱԻՐ
ՄԱՍԻՆ ԵՕԹԸ ԿԵՐՊ Է

Ա. Փոյթ ունենալ ընտանիքը անօթի կամ
մերկ չի պահելու :

Բ. Սրթուն ըլլալ զանոնք վտանգաւոր

առիթներէն զգոյշ պահելու Նախախնամութեամբ . որ Պօղոս առաքեալին քամահրած մարդուն չի նմանի . « Սրբընտանեացն խնամ ոչ ունիցի 'ի հաւատոցն ուրացեալ ե » :

- Գ. Հատուտ զիտնալ որ Աբքրչին պարգեւօքն է որ զանոնա կը կերակրէ , ոչ թէ իր քաջութեամբը :
- Դ. Զաւակները արհեստաւոր ընելու փայտունենալ , դպրատան գործ քերէն ետքը :
- Ե. Միշտ քաղցրաբանութեամբ ընտանեաց սիրտը իրեն քաշել , որ խրատը մտիկ ընեն սիրով , ոչ թէ ահամայ :
- Զ. Զախով յանդիմանել երբ պակասութիւն տեսնայ վրանին . Պօղոս առաքեալն ալ այսպէս կուղէ . « Հնարք' մի գայրացուցանեք զորդիս ձեր » կըսէ :
- Է. Իրեն ծածուկ խորհուրդը՝ ընտանեացը չի յայտնել :

Լ Զ .

ԱՄԵՆ ՄԷԿ ԳՈՐԾԱՐԱՆ ԿԱՄ ԳՊՐԱՏՈՒՆ
ԿԱՄ Ո ԵՒ ԻՑԷ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ
ՊԱՇՏՕՆ ՏԱՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՄԲ ԵՂԱԾ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՅՍ] ԵՕԹԸ ԿԱՆՈՆԻ
ԿԱՐՕՏ Է ՈՐ ՕՐԻՆԱԻՈՐ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԻՈՐ
ԸԼԼԱՅ


- Ա. Պէտք է որ սաշտօնեաները միարա-
նական սիրով ըլլան ,
- Բ. Աստուածազօր ,
- Գ. Հաւատարիմ ,
- Դ. Առաջուց գործուած . թէ վարքը թէ
հետաթիւնը նոյն արհեստին ,
- Ե. Անաչառութիւն վերաանաչին . ինչու որ
մէկին աչառութիւն կամ դթութիւն
ընելու պատճառաւ հասարակութեան
օգտին վնաս տալը ողորմութեան ա-
ռաքինութիւն կամ եղբայրօրութիւն
չէ . հոպա սէտք է որ անանկ տը-
կարները այլ իմն գործի մէջ շահուին ,

որ հասարակութեան չի դպչի ունեցած թերութիւնը կամ տկարութիւնը, որ իւրաքանչիւրոց յարզը պահուած ըլլայ:

Զ. Գործերնուն մէջ կարգ եւ կանոն դրանուի. ըստ որում առանց կանոնի ամենեւին գործ մը չի բանիր. կարգ եւ կանոն՝ զոյգ մը լուծ կը նմանին գործին սայլը յաջողութեամբ յառաջ տանելու. եւ ամեն մէկ գործին էական մասունքը կարգ եւ կանոնն է:

Է. Պօղոս առաքելոյն հրամանը պահելով թէ «Տէնրք զիրաւունս եւ զհաւասարութիւն ծառայից ներոց շնորհեցէք»: Պաշտօնէից մէջ նախանձութիւն չի ձգելու համար, միօրինակ խնամք եւ սէր պէտք է ըլլուի վարձքերնին մի եւ նոյն ժամանակի մէջ անթերի արուելով առանց սիրտ վշտացընելու. որ պարտաւոր ըլլայ սպաստ-


Լորը կամ պաշտօնեայն իրեն դործին
մէջ սիրով աշխատելու ապագայ ժա-
մանակներու մէջ :



ԼԷ.

ՍԹԸ ՏԵՍԱԿ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿԱՅ
ՈՐ ՄԱՐԴՈՅՍ ՇԱՀԱՒՈՐ ԲԱՐԻ ԳՈՐԾՈՅ
ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆԸ ՊԱՏՃԱՌ ԿԸԼԼԱՆ
ԵՒ ԲԱՐԻ ԽՆԴԻՐՔ ԿԸ ԿԱՏԱՐԻ

- Ա. Առ Աստուած ապաւինել ,
- Բ. Ազօթ ահիրութիւն ,
- Գ. Ողորմածութիւն ,
- Դ. Սիրտ սուրբ ունենալ ,
- Ե. Այլոց բարեաց վրայ աննախանձաբար
ուրախանալ , կամ ազօթել ,
- Զ. Արդար վաստակ սիրել ,
- Է. Խոհեմութեամբ աշխատիլ ,



ԼԸ .

ԵՅԹԸ ԿԵՐՊ ԶԱՐԻՔ ԿԱՆ

ՈՐ ՊԱՏՃԱՌ ԿԸԼԼԱՆ ՄԱՐԳՈՅՍ

ԶԱՌՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՍԱՍԿԱՆԱԼՈՒ

- Ա. Գժգոհանք . ըսելով թէ՛ Աստուած այս ամեն ձախորդութիւնները ինծի մի կուտայ .
- Բ. Յուսահատութիւն .
- Գ. Նախանձութիւն ընել այլոց տնեցած քարեացը վրայ . թէ հարստութեանը թէ անգործութեանը .
- Դ. Անճնապատան ըլլալ միայն իր խելքին հաւնելով .
- Ե. Այլոց զրկում ընել գողութեամբ կամ յափշտակութեամբ կամ վարձք չի տալով վարձաւորաց .
- Զ. Անգութ ըլլալ խղճալեաց եւ կարօտելոց .
- Է. Աշխարհիս փառաց եւ մեծութեան բազմանօք ղիտել , անով հպարտու-

Թիւն բանեցնելու կամ իշխանութեամբ
զայլս նեղելու :

ԼԹ.

- ԵՕԹԸ ՏԵՂ, ԿԱՅ ՈՐ ԽՆԱՄԱՐԿՈՒ ՊԱՇՏՊԱՆԻ
ԿԱՐՕՏ Է ԸՍՏ ՕՐԻՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ՁԷ ՆԷ ՇԱՏ ՊԱԿԱՍՈՒԹԻԻՆԵՆԵՐ ԿԸԼԼԱՆ
Ա. Քաղաքը կուզէ քաղաքացեալս :
Բ. Խրաքանչիւր ազգ կուզին իրենց ազ-
գացեալս :
Գ. Եկեղեցին կուզէ Քահանայ :
Դ. Ինտոր որ նորատունկ ծառը ծուռ չի
բուսնելու համար ամուր յննարան մը
կուզէ, անանկ ալ խրաքանչիւր տան
մէջ ահրնկէց պատուաւոր մը պէտք
է ընտանիքը ծուռ ընթացք չունե-
նալու համար :
Ե. Ամեն վարժարան կարօտ է խոհեմ եւ
դիտուն անօրէնի :
Զ. Ո՛ր եւ իցէ արհեստաւոր դորժարաններ

կարօտ են, արթուն եւ խոհեմ վերա-
կացուներու :

- Է. Ճամբորդութեան մէջ ալ կարաւանը
(քէվրանը) կարօտ է հմուտ առաջնորդի :

Խ.

ԱՍՏՈՒԱՄԱՀԱՃՈՅ ՊԱՏՈՒԱԻՈՐ ԱՅԶԻՆՔ
ԵՕԹԸ ՏԵՍԱԿ ԵՆ

- Ա. Քրիստոսասէր կարգապաշտ կրօնաւոր-
ները . ինչպէս Քրիստոս ալ ըսած է .
« Դնք էք աղ յերկրի. դնք էք լոյս
աշխարհի. եւ քե՛ որ որ արբուսցե
ձեզ բաժակ մի ջուր ցուրտ յանուն
աշակերտի, ոչ կորուսցե զվարձս
իւր » :
- Բ. Առաքինախալ բարեպաշտ աստուածա-
սէրները :
- Գ. Բարեխնամ խրատատու ծերերը :
- Դ. Չեղնտու եւ հոգարարձու ազգասէր-
ները :

1. Գնումնակ ժառանգի աղքատները, եւ հողւով աղքատ ըսված հեղահայիները :
2. Իրաւախոհ եւ արգարագառ նշմարտախօսները :
- Է. Աղատական եւ ծառայական արհեստներու մէջ՝ շնորհալի քաջարուեստ գիտականները. որոնք որ աշակերտաց եւ գաւախաց շէն խնայեր գիտցածին հարդելու աղղատիրաբար :



Առ այժմ բառական կը համարինք
այսբանը:

